ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԿԱՐՄՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1
22 հունվարի 2011թվական

Ստորագրության նմուշներն հաստատելու մասին

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունվարի 18-ի , Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեների կառավարման կարգը հաստատելու մասինե 48 որոշման 1-ին կետով հաստատված կարգով ու Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունվարի 18-ի 48 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 23-ի 1129-Ն որոշմամբ

Որոշում եմ

Ստորագրության նմուշներն հաստատելու համար լիազորել Կարմրաքարի համայնքի ղեկավար Գագիկ Վահրադյանին և առաջատար մասնագետ հաշվապահ Անահիտ Սիմոնյանին:

Կարմրաքար Համայնքի ղեկավար՝ / / Գ. վահրադյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԿԱՐՄՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 2
26 հունվարի 2011թվական

Կարմրաքար համայնքի 2011 թվականի բյուջեի եռամսյա համամասնություններն հաստատելու մասին:

Ղեկավարվելով ,Տեղական ինքնակառավարման մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածի, ինչպես նաև ,Բյուջետային համակարգի մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 33- րդ հոդվածի 1- ին կետի դրույթներով՝

Որոշում եմ

Հաստատել համայնքի 2011 թվականի բյուջեի եռամսյա համամասնությունները՝

Եկամուտներ- ընդամենը	հազար դրամ, այդ թվում
1-ին եռամսյակ	հազար դրամ
2-րդ եռամսյակ	հազար դրամ
3-րդ եռամսյակ	հազար դրամ
4-րդ եռամսյակ	հազար դրամ

Ծախսերն - ընդամենը	հազար դրամ, այդ թվում
1-ին եռամսյակ	հազար դրամ
2-րդ եռամսյակ	հազար դրամ
3-րդ եռամսյակ	հազար դրամ
4-րդ եռամսյակ	հազար դրամ

Կարմրաքար Համայնքի ղեկավար՝ / / Գ. վահրադյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԿԱՐՄՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 3
22 մարտի 2011 թվական

Կարմրաքար համայնքի ղեկավարի 26 հունվարի 2011 թվականի թիվ 2 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

Ղեկավարվելով ,Տեղական ինքնակառավարման մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածի, ինչպես նա ,Բյուջետային համակարգի մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 33- րդ հոդվածի 1- ին կետի դրույթներով՝

Որաշում եմ

Համայնքի բյուջեի , Օրենսդիր գործադիր մարմիններ պետական կառավարումե ծրագրի , Աշխատողների աշխատավարձեր ու հավելավճարներե հոդված 4111-ի չորրորդ եռամսյակից 100.0 դրամ տեղափոխել առաջին եռամսյակ:
,Սոցիալական ապահովության վճարներե 4131 հոդվածից 30.0 հազար դրամ տեղափոխել երկրորդ եռամսյակ:

Կարմրաքար Համայնքի ղեկավար՝ / / Գ. վահրադյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԿԱՐՄՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

<< 06 >> հունիսի 2011թ. N4 **գ. Կարմրաքար**

Համայնքում քաղաքացիական պաշտպանության շտաբ, տարահանման հանձնաժողով եւ քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ ստեղծելու մասին

Ղեկավարվելով 29.12.1996թ. ,Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասինե եւ 29.03.2002թ. ,Քաղաքացիական պաշտպանության մասինե Հայաստանի Հանրապետության օրենքներով, Կարմրաքար համայնքում քաղաքացիական պաշտպանության միջոցառումների պլանավորման, կազմակերպման եւ իրականացման նպատակով.

1. Ստեղծել՝

1)քաղաքացիական պաշտպանության շտաբ, շտաբի պետ նշանակել համայնքի ղեկավարի տեղակալին եւ շտաբը համալրել համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան մասնագետներով:
2) Համայնքի տարահանման հանձնաժողով, հանձնաժողովի նախագահ նշանակել համայնքի դպրոցի տնօրենին եւ հանձնաժողովը համալրել դպրոցի ուսուցչական կազմից:
3) Քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ՝
ա.փրկարարական խումբ՝ 1/9 անձնակազմով, հրամանատար՝ Անահիտ Վահրադյան
բ. կապի խումբ՝ 1/3 անձնակազմով, հրամանատար՝ Իշխան Վահրադյան
գ. քիմիական, ճառագայթային դիտարկման կետ՝ 1/3 անձնակազմով, հրամանատար՝ Գաբրիելյան Տիգրան
դ. անհատական պաշտպանության միջոցներ բաշխման խումբ՝ 1/3 անձնակազմով, հրամանատար՝ Մաթևոսյան Մանվել
ե. հասարակական կարգի պահպանման խումբ՝ 1/3 անձնակազմով, հրամանատար՝ Մաթևոսյան Արթուր
զ. գյուղատնտեսական կենդանիների եւ բույսերի պաշտպանության խումբ՝ 1/3 անձնակազմով, հրամանատար՝ Մաթևոսյան Երվանդ

2.Հանձնարարել՝

1) քաղաքացիական պաշտպանության շտաբի պետին՝
ա. քաղաքացիական պաշտպանության կազմավորումները համալրել անձնակազմով, գույքով եւ տեխնիկայով.

բ. կազմակերպել եւ իրականացնել համայնքի քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմի, կազմավորումների անձնակազմի եւ բնակչության ուսուցումը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 30.01.2003թ. թիվ 134-Ն որոշման.

գ. կազմել եւ յուրաքանչյուր տարի մինչեւ հունվարի 1-ը ճշտել համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 22.04.2004թ. թիվ 633-Ն որոշման.

3.Համայնքապետարանի քարտուղարին՝
սույն որոշման մասին իրազեկել ըստ պատկանելիության:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը իրականացնում եմ անձամբ:

Կարմրաքար համայնքի ղեկավար՝ / / Գ. Վահրադյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԿԱՐՄՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 5
23 օգոստոսի 2011 թվական

Կարմրաքար համայնքի ղեկավարի 26 հունվարի 2011 թվականի թիվ 2 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

Ղեկավարվելով ,Տեղական ինքնակառավարման մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածի, ինչպես նաև ,Բյուջետային համակարգի մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 33- րդ հոդվածի 1- ին կետի դրույթներով՝

Որաշում եմ

Համայնքի վարչական բյուջեի ,Հատուկ նպատակային այլ նյութերե հոդված 4269-ի չորրորդ եռամսյակից 12.200 / տասներկու հազար երկու հարյուր/ դրամ տեղափոխել երրորդ եռամսյակ:

Կարմրաքար Համայնքի ղեկավար՝ / / Գ. վահրադյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԿԱՐՄՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 6
15 հոկտեմբերի 2011 թվական

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Կարմրաքար համայնքի սեփականատեր Տարոն Սամվելի Մանուկյանին շինարարության թույլտվություն տալու մասին:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի դրույթով և հիմք ընդունելով Տարոն Սամվելի Մանուկյանի դիմումը

Որոշում եմ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Կարմրաքար համայնքի սեփականատեր Տարոն Սամվելի Մանուկյանին տալ շինարարության ժամանակավոր թույլտվություն:

Կարմրաքար Համայնքի ղեկավար՝ / / Գ. Վահրադյան

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Շ Ի Ր Ա Կ Ի Մ Ա Ր Զ
Կ Ա Ր Մ Ր Ա Քա Ր Հ Ա Մ Ա Յ Ն Քի Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 7
26 դեկտեմբերի 2011 թվական

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Կարմրաքար համայնքի ղեկավարի աշխատակազմին պարգևատրում տրամադրելու մասին:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի դրույթով

Որոշում եմ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Կարմրաքար համայնքի ղեկավարի աշխատակազմին տալ դրամական պարգևատրում՝ յուրաքանչյուրին մեկ ամսվա աշխատավարձի չափով:

Կարմրաքար համայնքի ղեկավար՝ / / Գ. Վահրադյան